

Տ Ա Ր Ե Կ Ա Ն    Հ Ա Ն Գ Ի Ի Ս Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ս Ր Բ Ո Ց Թ Ա Ր Գ Մ Ա Ն Չ Ա Ց Ե Ր Կ Ր Ո Ր Գ Ա Կ Ա Ն Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն Ի

Ա.— Դ Ա Շ Տ Ա Հ Ա Ն Գ Է Ս

Կիրակի, 13 Մայիս, կէսօրէ ետք ժամը 4ին, ազգայիններու կսկիկ բաղձութիւն մը տեղ գրաւած էր ժառանգաւորաց Վարժարանի մարդադաշտի կողքին, զիտելու համար արդիւնքը դպրոցի տարուան մը մարդական աշխատանքին:

Չոյզ մարդիչները — Պր. Մխաթ Յակոբեան՝ մանչերու, իսկ Օր. Աշխէն Վարդանեան՝ աղջկանց —, ոչինչ խնայած էին աշակերտութեան Փիլիթասկան կրթանքին ի խնդիր: Ասոր ապացոյցն էին վաղբերք, մարզանքները, դրօշաբարչաւր, պարանաձուլութիւնը, բուրդերը եւ այլ մարդական խաղերը, որոնք յաջողապէս կատարեց երկուսն ուսանողութիւնը, բաժնուած երկու մրցորդ խումբերու:

Հանդէսի աւարտին, Գերշ. Տ. Շահէ Եպիսկոպոս բաժնեց բաժաններն ու մէտաղները յաջող մարդիկներուն:

Երկու ժամեր տեւող հանդէսի աւարտին, հանդիտականները զո՛հ տրամադրութեամբ բաժնուեցան խաղափայրէն:

Բ.— ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԳԷՍ ՄԱՆԿԱՊԱՐՏԷՋԻ ԲԱԺՆԻՆ

3 Յունիս, Կիրակի կէսօրէ ետք ժամը 4ին, Հայ Երիտասարդաց Միութեան ակումբին մէջ տեղի ունեցաւ ամափերջի հանդէսը Ս. Թարգմանչաց Մանկապարտէզին:

Օր. Մելինէ Եղիսեանի գլխաւորութեամբ զործող Մանկապարտէզի երեք օրիորդներէ բաղկացած ուսուցչական կազմը գովելի ճիղերով պատրաստած էր ժամուկէս լեցնող յայտագիր մը, ուր տեղ գտած էին արասանութիւններ, կորճ տրամախօտութիւններ, մարզանքներ ու պարեր: Բունն ծափահարութիւններ խլեց սրահը լեցնող հանդիտականներէն մանուաւնդ վերջին, հայրական պարը, երվներանդ տարազներով:

Վարժարանի Տեսուչ Հոգշ. Տ. Կիրեկ Ծ. Վարդապետ Մանկապարտէզի բաժինը աւարտող 11 երկուսն փոքրիկներուն վկայականները բաշխելէ ետք, օրհնեց բոլորը եւ «Պահպանիչ»ով փակեց հանդէսը:

Գ.— ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԳԷՍ ԵՐԿՐՈՐԳԱԿԱՆ ԲԱԺՆԻՆ

1972 — 1973 տարեշրջանի դպրոցական հանդիտութիւններուն վերջինը եղաւ Երկրորդական բաժնի ամափերջի հանդէսը, որ տեղի ունեցաւ Կիրակի, 10 Յունիս, երեկոյեան ժամը 6-45ին, Վարժարանի սրահին մէջ:

Հանդէսին կը նախադասէր Գերշ. Տ. Շահէ Եպոս. Աճէմեան: Սրահը ծայրէ ծայր լեցուն էր բաղմունիքով:

Երկու մասերէ բաղկացած յայտադիրը տեսց մօտ երկու ժամեր: Առաջին մասին մէջ, ընթացաւորա սանուհիներէն երկուքը, Գեղանոյշ Ռաճոյեան և Մելինէ Քէրանեան, խօսեցան Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետի մասին, անոր մահուան ճՈՍամեակին առթիւ ներկայացնելով բազմաբղիւն կաթողիկոսի գրական ու վարչական գործունէութիւնը: Երկրորդական բաժնի սաներէն բաղկացած Երզնախումբ մը, ղեկավարութեամբ Պր. Սահակ Գալայճեանի, Հանդէս եկաւ հայրենական նոր երգերու յայտադրով մը, գտնակի ընկերակցութեամբ Պր. Վահէ Գալայճեանի: Երգն նաեւ արտասանութիւններ, յաջող ու յատակ առողանութեամբ:

Հանդէսին երկրորդ բաժինը սկսաւ Տեսուչ Կիրեղ Թ. Վրդ. Գարիկեանի միամեայ տեղեկագիրի ընթերցումով (որ լոյս կը տեսնէ Սիւնի ալս թիւով): Հայրսուրբը յայտնեց թէ այս տարի կ'ամբողջանայ քսանամեակը դպրոցի երկրորդական բաժնին: Նաեւ մատնանշեց թէ անցնող տարուան G. C. E. թնութիւններուն արդիւնքները Վարժարանին եղած էին յաջողորնը քաղաքի վարժարաններուն: Գպրոցական նուաճումներէն ուրիշ մը եղած էր շէնքի արեւելեան թեւին վրայ կառուցուած բաժին մը, որուն շինութիւնը շատ մօտ օրէն կ'աւարտի:

Այս կառարուեցաւ բաշխումը վկայականներու և մրցանակներու: Չորս մանչ և ճինդ աղջիկ աւարտած էին վարժարանին շրջանը:

Հրաժեշտի երգէն և շրջանաւարտներէն Յակոբ Տաքէսեանի կողմէ արտասանուած ուղերձէն յետոյ, նախադաս Գերշ. Տ. Շահէ Եպիսկոպոս ձեռք բերուած արդիւնքին համար իր գոհունակութիւնը արտայայտելէ և ընթացաւարտներուն՝ պահէն թելադրուած յորդորական խօսքեր ընելէ ետք, «Պահպանիչ»ով օրհնեց բոլորը:

Հանդէսը փակուեցաւ՝ «Օրհնեցէր դՏէր» Ս. Աթոռոյ մաղթերդ—չարականի երգեցողութեամբ: